# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Ջերմուկ**

**7/սեպտեմբերի/2022**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
# ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, Գնդեվազ և Կեչուտ գյուղերի վարչական ղեկավարները, համայնքի ղեկավարի օգնական Ա. Սիմոնյանը:**

**Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարդան Սարգսյանը**

**Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թաղևոսյանը**

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 7-ի արտահերթ նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը.*

1.1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Կողմ*-----8----- *Դեմ*-----1----- *Ձեռնպահ*-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1–ին հոդվածին համապատասխան՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ (ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով) կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*-----10----- *Դեմ*-----1----- *Ձեռնպահ*-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ա/

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | ստորագրություն |
|---|---|
| Արսենյան Վահագն Աշոտի | [signature] |
| Սարգսյան Վարդան Ռաֆիկի | [signature] |
| Սարգսյան Լուսիկ Ժորայի | [signature] |
| Վարդազարյան Աննա Վասակի | [signature] |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | |

| | |
|---|---|
| Խաչատրյան Գոհար Բաբկենի | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | |
| Այվազյան Մխիթար Վոլոդյայի | |
| Մկրտչյան Մարինե Մայիսի | |
| Բաբայան Ժիրայր Ժորայի | |
| Մնացականյան Արկադի Ալբերտի | |
| Գևորգյան Մանան Աղվանի | բացակա |
| Վահանյան Վարուժան Կնյազի | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | |
| Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի | բացակա |

*Ջերմուկ համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝*

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ______________

*Նիստն արձանագրեց՝* Գոհար Թադևոսյան______________